

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորապատ գյուղական համայնքի ղեկավարի 2013 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների մասին:

Հաշվետու ժողովը տեղի է ունեցել 2013 թվականի հուլիսի 11-ին

ժամը 14.00-ին համայնքի կուլտուրայի տան դահլիճում:

Ժողովին մասնակցում էին ավագանու

անդամներ, համայնքապետա-

րանի աշխատակազմը, դպրոցի ուսուցիչներ, մանկապարտեզի

կուլեկտիվի անդամներ, համայնքի բնակիչներ և Արմավիրի

մարզպետարանի ներկայացուցիչ՝ Գոռ Հովհաննիսյանը:

Ջեկուցումով հանդես եկավ համայնքի

ղեկավար՝ Ս.Բադալյանը,

որն իր աշխատանքները կազմակերպում է իրեն սահմանված լիազորությունների շրջանակներում:

2013 թվականի առաջին կիսամյակի ընթացքում հրավիրվել է չորս ավագանու նիստեր, որոնցում քննարկվել են համայնքին վերաբերվող մի շարք հարցեր և դրանց վերաբերյալ ընդունվել համապատասխան

որոշումներ: Ընդունված որոշումների կատարման մասին իրազեկվել

է համայնքի ազգաբնակչությանը:

Անցած վեց ամիսների ընթացքում համայնքի ղեկավարին

տարբեր հարցերով դիմել են շուրջ 50 քաղաքացիներ, որոնց

պահանջներին տրվել են համապատասխան լուծումներ: 221

քաղաքացիների տրվել է տարբեր բնույթի տեղեկանքներ, 3-ին՝ շինարարության թույլտվության իրավունք:

Գյուղատնտեսության բնագավառ

2013թվականի առաջին կիսամյակին առանձնակի ուշադրություն է դարձվել գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման,

բարձր բերքի ապահովման ուղղությամբ:

Պետական աջակցության ծրագրերի շրջանակներում համայնքի

հողագործներին մատչելի գներով վաճառվել է 3480,0 հազար դրամի

պարարտանյութ, 16970,0 հազար դրամի դիզվառելանյութ, որը խթան կհանդիսանա արտադրվող մթերքների ինքնարժեքի իջեցման,

ստացվող շահույթի ավելացման համար:

2013թվականի մայիսի 12-ի կարկտահարության հետևանքով համայնքի 14 հողագործներին հասցված վնասը մեղմացնելու, կարկտահարման հետևանքները վերացնելու նպատակով համայնքապետարանի ուժերով կազմակերպվել է մեթոդական օգնություն կորցրած բերքի վերականգման և եկող տարվա համար բարձր բերքի ապահովման ուղղությամբ:

Կառավարության աջակցության միջոցներով կարկուտից տուժած

հողատերերին հատկացվեց 7,5կգ վարունգի, 6,0կգ կերային ճակնդեղի, 0,2կգ լոլիկի սերմեր:

Ժամանակին է կազմակերպվել ջրատարների վերանորոգումը, դաշտամիջյան ճանապարհների բարեկարգումը :

Կենցաղ սպասարկման բնագավառ

Բնակչության կենցաղային հարցերը եղել և մնում են համայնքի ղեկավարի ամենօրյա ուշադրության կենտրոնում:

Համայնքի տարածքում կատարվում է անվճար աղբահանություն, որի համար 2013թվականի առաջին կիսամյակի ընթացքում ծախսվել է 384,0 հազար դրամ

գումար: Աղբահանությունը ժամանակին և անթերի կատարելու համար ձեռք է բերվել աղբահանման մեքենա: Համայնքի

նորաստեղծ թաղամասերում անցկացվել է էլ.էներգիա
:Աշխատանքներ են տարվում համայնքի
նորաստեղծ թաղամասերը գազաֆիկացնելու ուղղությամբ:
Համայնքում խմելու ջրի մատակարարումը 24 –ժամյա
դարձնելու համար իրականացվում են մի շարք միջոցառումներ:

Մշակույթ և սպորտի բնագավառ

Համայնքապետարանը կուլտուրայի տան և դպրոցի կուլեկտիվի
հետհամատեղ կազմակերպում է մի շարք
միջոցառումներ՝ տրամադրելով նաև որոշակի դրամական
օգնություն: Այգեմիջյան տարածքում կառուցվել է մինի
ֆուտբոլի
խաղահրապարակ,որտեղ կազմակերպվում են տարբեր
տարիքի
երեխաների համար մրցույթներ:
Համայնքապետարանը իր մշտական աջակցությունն է
ցուցաբերում
մանկապարտեզում կազմակերպվելիք միջոցառումներին:

Մոսկվաբնակ համագյուղացի գործարար՝ Հրանտ Սպարտակի
Սահակյանի միջոցների հաշվին հիմնովին վերանորոգվում է
մանկապարտեզի շենքը,որը շահագործումից մինչև օրս,
շուրջ 30 տարի չէր վերանորոգվել:Շուտով այն նորոցված,իր
դռները կբացի գյուղի նախադպրոցական տարիքի երեխաների
առջև:

Սոցիալական բնագավառ

Համայնքապետարանը իր ամենօրյա ուշադրության
կենտրոնում է
պահում սոցիալապես անապահով ընտանիքներին օգնություն

ցուցաբերելու, նրանց դիմումներին ընթացք տալու գործընթացը: 18 ընտանիքների տրամադրվել է 900,0 հազար դրամական օգնություն:

12 ընտանիքներ ընդգրկված են նպաստառուների ցուցակում, մեկ զինծառայող ազատվել է ավտոմեքենայի գույքահարկից:

Համայնքային բյուջեյի իրագործում

Բյուջեյի կատարման գործընթացը մշտապես եղել է համայնքի ղեկավարի առաջնահերթ ուշադրության կենտրոնում: 2013թվականի առաջին կիսամյակի ընթացքում հավաքագրվել է

հողի հարկ՝ 1529,4 հազար դրամ՝, գույքահարկ՝ 2333,0 հազար դրամ:

Համայնքապետարանը աշխատավարձի, սոցվճարումների և այլ

ծառայությունների հետ կապված վճարումները կատարում է ժամանակին: Աշխատակիցները սահմանված կարգով օգտվում են

իրենց սահմանված արձակուրդներից:

Համայնքի հիմնախնդրիները

1. Ոռոգման ջրի ինքնահոս մատակարարում
2. Մշակույթի տան շենքի նորոգում
3. Մրգաշատ տանող ճանապարհի նորոգում
4. Գյուղում գիշերային լուսավորության անցկացում:

Նորապատ համայնքի ազգաբնակչությունը համայնքապետ՝ Ս.Բադալյանի գլխավորությամբ իրենց խորին շնորհակալությունն են հայտնում մարզպետ պարոն՝ Ա. Ղահրամանյանին համայնքի կողմից բարձրացված խնդիրներին լուծում տալու

համար և լի են վճռականությամբ համայնքի առջև ծառայած
խնդիրները կյանքի կոչելու ուղղությամբ:

Նորապատ համայնքի ղեկավար՝

Ս.Բաղայան